**Արձանագրություն N 2-2**
**ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/5 ծածկագրով ՀՀ Շիրակի մարզի «Ախուրյանի Նիկոլ Աղբալյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նորոգման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 14.08.2025թ.
ժամը 10:20

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ս. Գասպարյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Խաչատրյան |
| | Ա. Աչոյան |
| | Ս. Իշխանյան |
| | Ա. Եղիազարյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Գ. Հակոբյան |

**1. Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի ուսումնասիրության մասին**
---------------------------------------------------------------------------------------------------
(Ս. Գասպարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ Առողջապահության նախարարությունից սահմանված ժամկետում գրություն չի ստացվել, ՀՀ պետական եկամուտների կոմիտեից, ԿԳՄՍ նախարարությունից, ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամից, Երևանի քաղաքապետարանից, Թալինի և Գյումրու համայնքապետարաններից ստացված գրությունների համաձայն, գնման ընթացակարգի մասնակից «ԳՈՀԱՐԻԿ» ՍՊԸ-ի և «Փարվանա» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/5 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին:

1.2 Գնման ընթացակարգի մասնակիցներ՝ «Սատանի կամուրջ» ՍՊԸ և «123» ՍՊԸ կոնսորցիումի, «Վաղժան» ՍՊԸ և «ՄՈՆՈԼԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կոնսորցիումի հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

**<u>«Սատանի կամուրջ» ՍՊԸ և «123» ՍՊԸ կոնսորցիում</u>**

- Համատեղ գործունեության պայմանագրի 2.4 կետում նշված են 2 տարբեր պատվիրատուներ:

**<u>«Վաղժան» ՍՊԸ և «ՄՈՆՈԼԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կոնսորցիում</u>**

- դիմում-հայտարարության մեջ «Վաղժան» ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումով բացվում է «ՄՈՆՈԼԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, իսկ «ՄՈՆՈԼԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումով իրական շահառուների https://www.e-register.am էջը չի բացվում:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «Սատանի կամուրջ» ՍՊԸ և «123» ՍՊԸ կոնսորցիումին, «Փարվանա» ԱԿ-ին, «Վաղժան» ՍՊԸ և «ՄՈՆՈԼԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կոնսորցիումին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 15.08.2025թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումները ներկայացվելու դեպքում, հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/5 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի <u>tender4@minurban.am</u> էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0:*

## 2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

------------------------------------------------------------------------

(Ս. Գասպարյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 18.08.2025թ. ժամը 11:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------------------------ Ս. Գասպարյան

Անդամներ՝ ------------------------------------------------ Ա. Խաչատրյան

------------------------------------------------ Ա. Աչոյան

------------------------------------------------ Ս. Իշխանյան

------------------------------------------------ Ա. Եղիազարյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ------------------------------------------------ Գ. Հակոբյան